



**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի  
կոնվենցիայի իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկուլյո  
(ՀՀ երկրորդ և երրորդ պարբերական զեկուլյո)**

**Կոնտակտային տվյալներ**

Արթուր Սաքունց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»  
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր, Տիգրան Մեծի 59, 2001  
Հեռ.՝ (+374 322) 4 22 68  
Ֆաքս՝ (+374 322) 4 12 36  
Կայքէջ՝ [www.hcav.am](http://www.hcav.am)  
Էլ. փոստ՝ [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)



OPEN SOCIETY  
FOUNDATIONS

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ: Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

## Բովանդակություն

|  |    |
|--|----|
| Կազմակերպության մասին  | 4  |
| Ընդհանուր տեղեկություններ  | 4  |
| Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդված 1-4)  | 5  |
| Չատուկ իրավունքներ (հոդված 5-30)   | 6  |
| Չավասարությունը և խտրականությունը (հոդված 5)   | 6  |
| Չաշմանդամություն ունեցող կանայք (հոդված 6)   | 8  |
| Չաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)   | 9  |
| Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)  | 11 |
| Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)  | 12 |
| Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)  | 13 |
| Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15) | 14 |
| Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)  | 15 |
| Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)   | 16 |
| Կրթություն (հոդված 24)   | 16 |
| Առողջության իրավունք (հոդված 25)   | 17 |
| Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29)   | 18 |

## Կազմակերպության մասին

Յեւսիսկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը տարածվում է ՀՀ ամբողջ տարածքում: Կազմակերպության գործունեության ոլորտներից է հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Յեւսիսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2007 թվականից ուսումնասիրում է հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակը, բարձրաձայնում առկա խնդիրները և իրականացնում դրանց հաղթահարման ուղղությամբ ջատագովություն: Կազմակերպությունը տրամադրում է նաև անվճար իրավական աջակցություն, այդ թվում՝ հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնում դատարանում:

Կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի անդամ է:

## Ընդհանուր տեղեկություններ

Չեկույցը կազմել է «Յեւսիսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը: Այն 2014 թ. Միավորված ազգերի կազմակերպության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացրել է այլընտրանքային զեկույց՝ Հայաստանի Հանրապետությունում հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակի վերաբերյալ, այնուհետև նաև առաջարկ ՀՀ առաջին զեկույցի առնչությամբ հիմնախնդիրների ցանկի վերաբերյալ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին Հայաստանի Հանրապետության կառավարության զեկույցի ներկայացումից և կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների հրապարակումից հետո հոգեսոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ուղղությամբ հաջողված բարեփոխումներից են՝

- ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների հրամաններով ձևավորվել են հոգեբուժական հաստատություններում և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի պետական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խմբեր,
- 2020 թ. հունվարի 30-ին ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է որոշում՝ անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտությունների վերաբերյալ և նրանց իրազեկված համաձայնություն ստանալը չներառվող ՀՀ մի շարք օրենքների դրույթները հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ,

- 2021 թ. ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը:  
Սրանք, այնուամենայնիվ, օրենսդրական մակարդակում եզակի հաջողություններ են, իսկ հիմնական բարեփոխումները հապաղում են:  
Այդ թվում՝
  - իրավունքահենք ծառայություններ գրեթե չեն ներդրվել,
  - երեխաների և դեռահասների համար համայնքահենք, կարիքին համապատասխան ծառայություններ չեն ներդրվել,
  - խիստ է հոգեկան առողջության ոլորտի մասնագետների կարիքը հատկապես ՀՀ մարզերում,
  - հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը չի վավերացվել
  - շարունակվում է ՀՀ օրենսդրությամբ անձին անգործունակ ճանաչելու և ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման պրակտիկան
  - «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենք չի ընդունվել
  - 2019 թ.-ից բացակայում է հոգեկան առողջության ոլորտի միասնական ռազմավարությունը և այդ ուղղությամբ գործողություններ չեն ձեռնարկվում:

Հարկ է նշել, որ հոգեկան առողջության պահպանման ոլորտում պետության կողմից միջոցառումների ոչ բավարար ու ոչ պատշաճ լինելը դրսևորվեց հատկապես 2020 թ. Արցախի Հանրապետության դեմ Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմից հետո: Հազարավոր զինծառայողներ ունեն հոգեբանական աջակցության կարիք, սակայն պետության կողմից անցած տարիների ընթացքում չեն ստեղծվել անհրաժեշտ ծառայություններ, չի համալրվել մասնագետների բացը, չեն ապահովվել բուժման արժանապատիվ պայմաններ՝ երաշխավորելու համար հոգեբանական աջակցությունն ու սպասարկումը: Համաձայն ՀՀ դատախազության՝ արձանագրված մի շարք ինքնասպանության և ինքնասպանության փորձ կատարելու դեպքեր ուղղակի առնչություն ունեն Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սանձազերծված պատերազմի արդյունքում անձանց մոտ առաջացած հոգեբանական խնդիրների հետ<sup>1</sup>: Այսինքն պետությունը, ունենալով հոգեկան առողջության ոլորտի բարեփոխման հնգամյա ռազմավարական ծրագիր, գրեթե չի կատարել ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները և քաղաքացիների հոգեկան առողջության պահպանման իր պարտականությունը:

## **Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդված 1-4)**

2014-2019 թթ. գործել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման ռազմավարությունը, որն արդյունավետ չի իրականացվել, հոգեւոցիալական և մտավոր

<sup>1</sup> <https://www.prosecutor.am/am/mn/8209/>

հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման խնդիրները լուծում չեն ստացել<sup>2</sup> և նոր ռազմավարություն մշակելու որևէ աշխատանքներ չեն նախաձեռնվում:

Չի վավերացվել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Թեև այդ նպատակով ՀՀ կառավարությունն իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ և 2020 թ. նոյեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել այն վավերացնելու նախագիծ, առանց հանրությանը որևէ հիմնավորում ներկայացնելու կառավարությունը 2021 թ-ի հունվարի 29-ին նախագիծը հետ է կանչել, և վավերացման հարցը մնացել է առկախ:

Արդյունավետ ու ներառական չեն նաև հոգեոցիալական և մտավոր հաշմանդամության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման աշխատանքները, ինչի մասին են փաստում շարունակվող խարանդ և խտրական մոտեցումները:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ կմշակվի և ե՞րբ կհաստատվի հոգեկան առողջության ոլորտը բարեկարգող նոր ռազմավարությունը
- Ե՞րբ կվավերացվի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը
- Խտրական վերաբերմունքի բացառման նպատակով իրականացվող դասընթացների և իրազեկման աշխատանքների արդյունավետությունը գնահատելու ի՞նչ մեխանիզմներ են գործում

## **Հատուկ իրավունքներ (հոդված 5-30)**

### **Հավասարությունը և խտրականությունը (հոդված 5)**

Հոգեոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումների հաղթահարման ուղղությամբ արդյունավետ և միասնական քաղաքականությունը բացակայում է:

ՀՀ սահմանադրությունը և ներպետական այլ իրավական ակտերը, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքն ամրագրում են հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, այնուհանդերձ դեռևս նախագծային փուլում է խտրականության դեմ պայքարի ոլորտը համապարփակ կարգավորող առանձին օրենքը: Առանձին իրավական ակտերով արգելվում է հոգեոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշ պաշտոնների համար դիսելու հնարավորությունը: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 685-Ն որոշմամբ հաստատվում է «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը», համաձայն որի որոշակի հիվանդություններ կամ

<sup>2</sup> See Report on the Implementation of 2014-2019 Strategy of Maintenance and Improvement of Mental Health in the Republic of Armenia, available at [https://hcav.am/en/evaluation\\_mental-health-strategy\\_2014-2019/](https://hcav.am/en/evaluation_mental-health-strategy_2014-2019/)

հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են այդ պաշտոնի համար դիմելու հնարավորությունից:

Հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ պետական ինստիտուտների կողմից խարանող, խտրական վերաբերմունքը շարունակվում է: Ոստիկանության ծառայողներն անձին տեղափոխում են հոգեբուժական հաստատություն՝ կիրառելով «ձեր կլիենտնա», «մենք գործ չունենք, սրանք շառ են» և նմանաբովանդակ արտահայտություններ, այլ պրոֆիլի բուժաշխատակիցները երբեմն նույնիսկ խուսափում են սպասարկել հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ «անգամ չեն ցանկանում դիպչել»: Ավելին, հոգեբուժական հաստատությունների աշխատակիցները ևս, իրենց աշխատանքի բնույթով պայմանավորված, այլ բուժհաստատություններում ենթարկվում են խարանի:

Վերջին տարիներին հաճախակի են դարձել նաև բարձրաստիճան պաշտոնյաների կողմից՝ միմյանց քննադատելու նպատակով հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց վիրավորող, պիտակավորող և արժանապատվությունը նվաստացնող ձևակերպումների օգտագործումը («հոգեկան հիվանդ», «մտավոր հետամնաց» և այլն): Ավելին, մի շարք պատգամավորներ որոշակի պարբերականությամբ հանդես են գալիս հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամության հիմքով խտրականությունը խթանող օրենսդրական նախաձեռնություններով: Այսպես, օրինակ 2020 թ. սեպտեմբերին Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը հայտարարել է հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց բարձրաստիճան քաղաքական պաշտոններ զբաղեցնելն արգելելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու գործընթաց նախաձեռնելու մասին<sup>3</sup>: Նախաձեռնությունը պաշտպանել են նաև Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող խմբակցության ներկայացուցիչները:

Հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որոշ ծառայություններ տրամադրվում են միայն մայրաքաղաք Երևանում (օրինակ՝ խնամքի տնային ծառայությունը) և հասանելի չեն մարզերի բնակիչներին: Ընդ որում 2021 թ. ապրիլի դրությամբ տնային խնամքի ծառայությունից օգտվում է հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող ընդամենը 60 անձ, մինչդեռ հանրապետությունում հաշվառված հոգեւոր հիւսիսային և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց թիվը մոտ 54.000 է:

## **Առաջարկվող հարցեր**

- Ինչո՞վ է պայմանավորված խտրականության դեմ պայքարի ոլորտը համապարփակ կարգավորող առանձին օրենքի չընդունումը և ե՞րբ այն կընդունվի
  - արդյո՞ք օրենքը կներառի հանրային և մասնավոր սեկտորներում հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը (ներառյալ բազմակի և հատվող խտրականության ձևերը, հատկապես՝ գենդերային հիմքով խտրականությունը)

<sup>3</sup> [Discrimination based on disability is violence against the relevant person's dignity: Statement | HCAV](#)

- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում ապահովելու ծառայությունների հասանելիությունը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար
- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խարանումը բացառելու ուղղությամբ և ինչպե՞ս է գնահատվում դրանց արդյունավետությունը

## Հաշմանդամություն ունեցող կանայք (հոդված 6)

2017 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը: Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան, սակայն, չի վավերացվել: Արդարադատության նախարարությունը կոնվենցիան վավերացնելու գործընթացը նախաձեռնել է 2019 թ., այնուհանդերձ մինչ օրս այն ԱԺ չի ուղարկվել:

Հաշմանդամություն ունեցող կանայք շարունակում են բռնության ենթարկվել: «...տանը կամ ընտանիքում ամենահաճախը բռնության են ենթարկվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանայք, այնուհետև մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք: Ընտանեկան բռնության պատճառները բազմաթիվ են՝ սկսած սոցիալական և իրավական ինստիտուտների աշխատանքի անկատարությունից, վերջացրած սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասով...», - նշվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնի հետազոտության մեջ<sup>4</sup>:

### Առաջարկվող հարցեր

- Ինչո՞վ է պայմանավորված Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացման հետաձգումը և ե՞րբ այն կվավերացվի
- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրարկման ուղղությամբ՝ հատկապես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների առնչությամբ և ինչպե՞ս է գնահատվում այդ քայլերի արդյունավետությունը

<sup>4</sup> Տե՛ս «Ծեծից մինչև անտեսում. ընտանիքում ամենից հաճախ բռնության ինչ տեսակների են ենթարկվում հաշմանդամություն ունեցող կանայք», «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, <http://agatengo.org/ծեծից-մինչ-անտեսում-ընտանիքում-ամենի/?lang=hy&fbclid=IwAR3zdyBHCvgywPL-SdVnY2NyzfsaxwLHgAiePMGJMTuDn49GwaHhMkxABqs>



- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար բռնության, այդ թվում՝ ընտանիքում բռնության, սեռական բռնության, սեռական ոտնձգությունների և վերաբերելի այլ թեմաներով իրազեկման ուղղությամբ՝ իրենց համար մատչելի և հասկանալի լեզվով և եղանակով
- Արդյո՞ք վիճակագրություն է վարվում և ապախոշորացված տվյալներ են հավաքագրվում հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ

## Հաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)

Վերջին տարիներին ավելացել է հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված համայնքահենք ծառայությունների թիվը, այնուամենայնիվ դրանք բավարար չեն: Համայնքում կարիքին համապատասխան աջակցության բացակայությունը հանգեցնում է երեխաների՝ համայնքում ներառվելու հնարավորության սահմանափակման և մեկուսացման:

Երեխաներին պետության կողմից հատկացվող հաշմանդամության թոշակը մոտ 54 ԱՄՆ դոլարին համարժեք ազգային դրամ է, մինչդեռ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021 թվականի երկրորդ եռամսյակում համապատասխանում էր մոտ 142 ԱՄՆ դոլարին (1 ԱՄՆ դոլարը 490 ՀՀ դրամ): Ավելին, ծառայությունների բացակայությունը հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքի առնվազն մեկ անդամին զրկում է աշխատելու հնարավորությունից, ինչը բացասաբար է անդրադառնում ընտանիքի ֆինանսական ապահովվածության և որպես հետևանք՝ երեխաների բարեկեցության վրա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո երեխաների խնամքի հաստատություններում գտնվող հոգեւոցաբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները 18 տարին լրանալուց հետո համայնքում աջակցող ծառայությունների սղության պատճառով շարունակում են ապրել հաստատությունում կամ տեղափոխվում են չափահաս անձանց համար նախատեսված խնամքի փակ հաստատություններ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Մարի Իզմիրյանի անվան և Խարբերդի մասնագիտացված մանկատներում շարունակել է ապրել 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող 168 անձ: 2019-2020 թթ. ընթացքում մանկատան նախկին սաներին նախարարությունը տվել է 206 բնակարանի գնման վկայական: Այնուհանդերձ, տվյալներ առ այն, թե այդ վկայականներից քանիսն են տրամադրվել հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց, բացակայում է, քանի որ նախարարությունը չի վարում այդ տողով առանձին վիճակագրություն: Ավելին, ՀՀ կառավարությունը 2021 թ. հոկտեմբերի 28-ին ընդունել է որոշում, որը խտրական է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, զրկում է բնակավայր ընտրելու իրավունքից և հակասում

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային: Մասնավորապես ՀՀ կառավարության 1774-Ն որոշմամբ սահմանվել է, որ բնակարանի գնման վկայագիր ստանալու իրավունք չունեն «ինքնասպասարկման ապահովման ունակություններ չունեցող շահառուները»:

Շարունակական բնույթ է կրում բռնությունը պետական հոգածության հաստատություններում, այդ թվում՝ հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ<sup>5</sup>:

Ապահովված չէ հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ սեռական կյանքի, առողջության մասին տեղեկություններ ստանալու, կրթվելու իրավունքը:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպե՞ս և ե՞րբ գնահատվել է հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ ծառայությունների կարիքը և որո՞նք են գնահատված կարիքները
- Հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները ե՞րբ և ի՞նչ միջոցներով կապահովվեն իրենց կարիքներին համապատասխան, հասանելի համայնքահենք ծառայություններով
- Ի՞նչ ժամկետներում է նախատեսվում համապատասխանացնել հաշմանդամության թռչակը առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին
- Ինչպիսի՞ աջակցություն և համայնքային ծառայություններ են նախատեսված հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար
- Մինչ օրս մանկատան՝ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած քանի՞ սանի է տրամադրվել բնակարանի գնման վկայական
- Ե՞րբ է նախատեսվում համայնքահենք ծառայությունների ներդրումը, որոնք կկանխեն հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց բնակությունը խնամքի հաստատություններում
- Ի՞նչ հիմնավորմամբ է ընդունվել ՀՀ կառավարության 1774-Ն որոշումը
- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներին հնարավոր բռնություններից պաշտպանելու ուղղությամբ և ինչպե՞ս է գնահատվում այդ քայլերի արդյունավետությունը/ի՞նչ արդյունքներ են արձանագրվել
- Ի՞նչպես են հոգեցնցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներն իրազեկվում սեռական առողջության պահպանման, սեռական կյանքի, բռնության վերաբերյալ, արդյո՞ք իրենց համար մատչելի և հասկանալի լեզվով և եղանակով և ինչպե՞ս է գնահատվում այդ քայլերի արդյունավետությունը/ի՞նչ արդյունքներ են արձանագրվել

5

<https://www.police.am/news/view/%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6220920.html>

## Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)

Անձին անգործունակ ճանաչող ներպետական օրենսդրությունը, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները որևէ փոփոխության չեն ենթարկվել: Ավելին, Սահմանադրության վերանայված տարբերակում նույնպես կիրառվում է «անգործունակ» եզրույթը (հոդվածներ 48; 98; 164; 193): 2020 թ. ընդունվել է «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, որում պահպանվել են անգործունակության հետ կապված դրույթներ:

Ոլորտում պրակտիկայի անփոփոխության մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները: 2010 թ. հունվարի 1-ից մինչ 2012 թ. հունիս ամիսը ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում անձին անգործունակ ճանաչելու նպատակով ստացվել էր 739 դիմում, որից բավարարվել էր 447-ը, այսինքն՝ դիմումների գրեթե 60%-ը: 2019 թ. անձին անգործունակ ճանաչելու հարցով վարույթ ընդունված 140 հայցերից բավարարվել է 73.6%-ը, մերժվել միայն 6.4%-ը:

Անձին անգործունակ ճանաչելու պատճառներ են շարունակում մնալ վերջինիս սեփականությանը տիրանալու, նրան հաստատություն տեղավորելու և այլ անձնական, սոցիալ-տնտեսական հանգամանքներ: Թեև հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար գործող խնամքի հաստատություններում անձի ընդունման համար չկա նրան անգործունակ ճանաչելու օրենսդրական պահանջ, գործնականում դա շարունակում է մնալ որպես պարտադիր նախապայման:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրում ՀՀ կառավարության N 1030-L 2021 թ. հունիսի 24-ի որոշմամբ նախատեսվել է ապահովել հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը, այդ թվում՝ ներդնելով աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ, այնուհանդերձ սա ոլորտում բարեփոխման իրականացման երաշխիք չէ<sup>6</sup>:

### Առաջարկվող հարցեր

- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում անգործունակության ինստիտուտի վերացման ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում
- Որո՞նք են ուղենիշները, որոնց համապատասխան կատարվելու են փոփոխությունները
- Ինչպե՞ս է ապահովվելու հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը գործընթացին

<sup>6</sup> [Elimination of the institute of incapacitation on the agenda | HCAV](#)

## Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)

Չնայած Կոմիտեի՝ Հայաստանին ներկայացրած մտահոգությանը ծառայությունների՝ գնային առումով անբավարար հասանելիության առումով, որևէ լուծում չի տրվել ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ կամ անգործունակ ճանաչված անձի կողմից դատական վճիռը բողոքարկելու համար պետական տուրք վճարելու պարտավորության հարցին: Ավելին, ավելացել է ֆինանսական բեռը՝ արդարադատությունը դարձնելով էլ ավելի անմատչելի և անհասանելի: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում 2021 թ. ընդունված փոփոխություններով դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ բողոքների համար պետական տուրքի գործող դրույքաչափերը միջինում ավելացել են չորս անգամ, մինչդեռ անձին անգործունակ ճանաչելու հայցով դիմողն ազատված է պետական տուրք մուծելու պարտավորությունից: Մտահոգիչ է նաև դատական պրակտիկան: 2018-2020 թթ. ավելի քան 20 տոկոս դեպքերում անգործունակ ճանաչվող անձինք չեն մասնակցել դատական նիստերին և չի ապահովվել նրանց լսված լինելու իրավունքը:

Օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել նաև քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման և ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ վճիռների վերացման դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց միջև: Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում բժշկական կազմակերպությունն իրավունք ունի դիմելու դատարան ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու համար (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 270.1 հոդվածի 1-ին մաս), մինչդեռ անձը կամ նրա ընտանիքի անդամը՝ ոչ, այն դեպքում, երբ նման իրավունքը վերապահված է անձին անգործունակ ճանաչելու հատուկ վարույթի շրջանակներում:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է անձի՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն (5-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ): Ըստ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջի՝ 2014-2015 թթ. ընթացքում իրավաբանական աջակցության համար դիմել է ընդամենը 4 անձ: ՀՀ հոգեբուժական հաստատություններից ստացված տվյալների համաձայն՝ 2016-2018 թթ. ընթացքում իրավաբանական աջակցության համար դիմել է 18, 2019-2020 թթ.՝ 258 անձ (2020 թ. միայն մեկ հաստատությունում իրավական աջակցություն է ստացել 209 անձ): Թեև ներկայացված վիճակագրության համաձայն՝ հետզհետե բարելավվում է անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքի կիրարկումը, այնուամենայնիվ ստացված տվյալների վերլուծությունը վկայում է, որ համակարգային փոփոխություններ հաստատություններում գտնվող անձանց կողմից իրավաբանական աջակցության

դիմելու հարցում չեն իրականացվել և դիմումների թվի արձանագրված աճը պայմանավորված է միայն մեկ-երկու հաստատություններում թվի աճով:

### **Առաջարկվող հարցեր**

- Մինչ ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման և անգործունակության համակարգերի վերացումը ինչպե՞ս է ապահովվելու անգործունակ ճանաչելու և ոչ հոժարակամ հոսպիտալացման, հետազոտության և/կամ բուժման վերաբերյալ վերջնական դատական ակտերը բողոքարկող անձանց կամ նրանց ներկայացուցիչների պետական տուրք չվճարելը
- Ե՞րբ և ինչպե՞ս է ամրագրվելու քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով
- Ինչպե՞ս է նախատեսվում ապահովել ազատության փաստացի սահմանափակման պահից իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը՝ անկախ իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի առկայության փաստից

### **Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)**

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ անգործունակ ճանաչված անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը, ինչպես նաև երկարաժամկետ մեկուսացումը խնամքի կենտրոններում և հոգեբուժական հաստատություններում շարունակվում է: Ըստ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջի տվյալների՝ 2010-2020 թթ. ընթացքում տարեկան ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ հայցը բավարարող դատավճիռ կայացվել է գործերի նվազագույնը 68.4 և առավելագույնը 89.1 տոկոսի դեպքում: Այդ որոշումների միայն 2.8 տոկոսն է բողոքարկվել: Մերժվել է գործերի միջինում 9.7 տոկոսը:

Հաճախակի են դեպքերը, երբ անձի հոժարակամությունը ձևական բնույթ է կրում. անձի «պարտադրված» համաձայնությունը դառնում է հոգեբուժական հաստատությունից առավել արագ դուրս գալու նախապայման: Բացի դրանից՝ անձի ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը երբեմն պայմանավորված է ոչ թե նրա առողջական վիճակով, այլ խնամակալի անձնական շահով:

2020 թ. ընդունված «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով ամրագրվում է անձի ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը՝ «հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ՝ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով» (հոդված 24): Օրինական ներկայացուցիչ ունենալու (այդ թվում՝ անգործունակ ճանաչված լինելու) դեպքում *նույնիսկ հոժարակամ օգնությունն ու սպասարկումն* իրականացվում է օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ որոշ բացառություններով՝ «16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձը հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված

համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տալիս է, եթե՝ 1) բժշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձն ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները. 2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին. 3) կոյուրացնեն նրանց հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրումը» (հոդված 17):

### **Առաջարկվող հարցեր**

- Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում ոչ հոժարակամ հոսպիտալացման ու բուժման վերացման ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում է նախատեսվում օրենսդրության համապատասխանեցումը Կոնվենցիայով սահմանված պահանջներին
- Որո՞նք են ուղենիշները, որոնց համապատասխան կատարվելու են փոփոխությունները
- Ինչպե՞ս է ապահովվելու հոգեցոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը գործընթացին

### **Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)**

ՀՀ ներպետական օրենսդրությունը արգելում է խոշտանգումների կիրառումը (ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված) և սահմանում է պատասխանատվություն (ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդված): Այնուամենայնիվ օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն, քանի որ հանցանքը խոշտանգում որակելու համար սուբյեկտը պետք է լինի պաշտոնատար անձ: Մինչդեռ, օրինակ, հոգեբուժական հաստատությունում անձը կարող է ենթարկվել վատ վերաբերմունքի սանիտարի կամ բժշկական անձնակազմի կողմից, որոնք պաշտոնատար անձ չեն համարվում: Ըստ այդմ նրանք չեն կարող պատասխանատվության ենթարկվել խոշտանգման հոդվածով: Նման դեպքերում արարքը որակվում է որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն, ինչը, սակայն, չի բխում խոշտանգման բացարձակ արգելից:

Բարձր է հոգեբուժական հաստատությունները որպես պատժի մեխանիզմ կիրառելու ռիսկը. անձը, սեռական կողմնորոշմամբ կամ կրոնական պատկանելությամբ պայմանավորված, կարող է հայտնվել հոգեբուժական հաստատությունում և դիտարկվի նրան հարկադիր բուժելու հավանականությունը: Ավելին, հոգեբուժական հաստատություններում գտնվող անձանց նկատմամբ կիրառվում են զսպման միջոցներ պատժելու նպատակով: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է դեպք, երբ անձը 7 օր

պահվել է ֆիզիկական զսպման սենյակում՝ այդ ընթացքում քնելով ֆիզիկական զսպման համար նախատեսված մահճակալին: Ընդ որում թե՛ տվյալ անձը, թե՛ բաժանմունքում բուժում և խնամք ստացող մյուս անձինք ու բժշկական անձնակազմի ներկայացուցիչներն անձի մեկուսացումը և նրա նկատմամբ կիրառված սահմանափակումները մեկնաբանել են որպես պատժիչ միջոցի կիրառում<sup>7</sup>:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ է ընդլայնվելու խոշտանգման հանցակազմի սուբյեկտների ցանկը՝ ներառելով հոգեբուժական հաստատություններում ի պաշտոնե գործող անձանց
- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում՝ բացառելու հոգեբուժական հաստատությունները որպես պատժիչ միջոց օգտագործելու պրակտիկան

### **Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)**

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են բնակվել խնամքի կամ հոգեբուժական փակ հաստատություններում՝ զրկված անկախ ապրելու ու համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման հնարավորությունից:

Թեև Հայաստանում 2013 թվականից հիմք է դրվել ապահիստիտուցիոնալացման քաղաքականությանը, այնուամենայնիվ այս տարիների ընթացքում որևէ փակ հաստատություն չի լուծարվել ապահիստիտուցիոնալացման նպատակով, իսկ առկա համայնքահենք ծառայությունների սղության պատճառով փակ հաստատություններում ընդունման հերթեր են: Գործում են սահմանափակ թվով՝ 12 համայնքահենք ծառայություններ, որոնք ծառայություն են մատուցում 363 անձի և տեղակայված են ՀՀ մայրաքաղաք Երևանում ու տասը մարզերից երեքում (հաշվառված հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց թիվը մոտ 54.000 է): Ընդ որում այս ծառայությունները թեև սուբսիդավորվում են պետության կողմից, հաճախ հայտնվում են փակման վտանգի առաջ ոչ բավարար միջոցների կամ դրանց կանոնավոր չտրամադրման պատճառով:

Համայնքահենք ծառայությունների և դրանց ներդրման ուղղությամբ առարկայական քայլերի բացակայության պայմաններում առավել մտահոգիչ են հոգեբուժական հաստատությունների միավորումները, պետության կողմից այդ հաստատությունների վերակառուցման ծրագրերի ֆինանսավորումը: 2021 թ. հաստատվեց Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնը վերակառուցելու ՀՀ կառավարության մոտ 100 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը, էջ 56, 11f00f3e87d3490e4e8c56f207e4bc85.pdf (ombuds.am)

ծրագիրը, այն դեպքում, երբ 2021 թվականին պետության կողմից սուբսիդավորվող 12 համայնքահենք ծառայություններին տրամադրված գումարը կազմում է ընդամենը մոտ 320.000 ԱՄՆ դոլար:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ է նախատեսվում մշակել և հաստատել հոգեկան առողջության բնագավառում ապահովագրության ռազմավարական ծրագիր
- Արդյո՞ք գնահատված է հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ համայնքահենք ծառայությունների կարիքը, որո՞նք են դրանք
- Որքա՞ն գումար է նախատեսվում տրամադրել համայնքահենք ծառայությունների ներդրմանն ու գործունեության ապահովմանը 2022-2024 թթ.

### **Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)**

ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կողմից երեխաներ որդեգրելու, ծնողական իրավունքներ ստանձնելու, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց ամուսնանալու արգելքի վերացմանը, չեն իրականացվել: Ավելին, 2021 թ. Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծով ծնողական իրավունքների սահմանափակման հիմք է նախատեսվել հոգեկան, մտավոր կամ նյարդային առողջության խնդիրներ ունենալը: Իսկ դրույթը փոփոխելու վերաբերյալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների առաջարկությունը պատկան մարմինը չի ընդունել:

### **Առաջարկվող հարցեր**

- Ե՞րբ են նախատեսվում օրենսդրական փոփոխություններ՝ երաշխավորելու հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիք ստեղծելու, երեխաներ որդեգրելու, ծնողական իրավունքներ ստանձնելու իրավունքը:

### **Կրթություն (հոդված 24)**

Չնայած հռչակված ներառականության քաղաքականությանը և դրա իրականացմանն ուղղված գործողություններին՝ փաստացի հոգեոգիակական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են պատշաճ, իրենց կարիքներին համապատասխան կրթություն ստանալու հնարավորությունից:



Հանրակրթական դպրոցները համալրված չեն բավարար թվով և անհրաժեշտ հմտություններով մասնագետներով: Ծնողի ներգրավվածությունը դառնում է երեխայի դպրոցում գտնվելու համար անհրաժեշտ պայման: Ավելին, թեև մինչև 2022 թ. նախատեսվում էր անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ դադարեցնելով հատուկ դպրոցներում հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ հոգեոնխալակ և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցումը, դրանք դեռևս գործում են որպես այդ երեխաների կրթօջախ:

Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ծրագրերը ընդհանուր են և հաշվի չեն առնում հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքներն ու պահանջմունքները: Դրա պատճառներից է այն, որ դրանց մշակման և որոշումների կայացման գործընթացում ուսումնական հաստատությունները չեն ներգրավվում:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում հոգեոնխալակ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կրթության բոլոր փուլերում իրենց անհատական կարիքներին ու պահանջներին համապատասխան որակյալ կրթություն ապահովելու ուղղությամբ
- Արդյո՞ք նախատեսվում է դադարեցնել/վերափոխել հատուկ դպրոցների գործունեությունը, ի՞նչ ուղղությամբ և ի՞նչ ժամկետներում
- Ինչպիսի՞ մեխանիզմներ են նախատեսված ձեռնարկված միջոցառումների ազդեցության գնահատման նպատակով և որո՞նք են քաղված դասերը և դրանցից հետագայում խուսափելու միջոցառումները

### **Առողջության իրավունք (հոդված 25)**

Հոգեբուժական օգնության տրամադրման հիմնական ձևը շարունակում է մնալ հոգեբուժական հաստատությունը: Ընդ որում դրանք ՀՀ 10 մարզերից հինգում հասանելի չեն:

Խնդրահարույց է ապահովվածությունը հոգեբույժներով և հոգեթերապևտներով հատկապես մարզերում: Այսպես, 2020 թ. տվյալներով մայրաքաղաք Երևանում 358 հոգեոնխալակ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի հաշվով է 1 հոգեբույժ, իսկ մարզերում՝ 813 անձի: Ավելին, ՀՀ 10 մարզերից 9-ում բացակայում են հոգեթերապևտներ, իսկ մանկական հոգեբույժների թիվը ամբողջ հանրապետությունում 6-ն է և բոլորը մայրաքաղաք Երևանում են:

Հոգեբուժական հաստատություններում պատշաճ չի ապահովվել մարմնական հիվանդությունների պատշաճ կանխարգելումն ու վերահսկումը, այդ թվում՝ Քովիդ-19 համավարակի պայմաններում ընդհանուր տիպի բժշկական կենտրոններում հոգեբուժական հաստատություններում գտնվող անձանց բուժում ստանալու իրավունքը: Ավելին, Քովիդ-19 համավարակի պայմաններում չի

ապահովվել նաև հոսպիտալացման և բուժման ցուցում ունեցող անձանց հոգեբուժական սպասարկումը<sup>8</sup>:

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպե՞ս է ապահովվելու կարիքին համապատասխան հիվանդանոցային և արտահիվանդանոցային որակյալ հոգեկան առողջության ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների պայմաններում
- Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում՝ երաշխավորելու հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մարմնական հիվանդությունների բուժման նպատակով ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների պայմաններում

### **Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29)**

Անգործունակ ճանաչված անձինք դեռևս հնարավորություն չունեն իրացնել իրենց ընտրական իրավունքը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ «...տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք» բացառությամբ դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների (հոդված 48):

### **Առաջարկվող հարցեր**

- Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում՝ երաշխավորելու հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար ընտրական իրավունքի երաշխավորման նպատակով

---

<sup>8</sup>Տե՛ս

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/viewer.html?pdfurl=https%3A%2F%2Fhcav.am%2Fwp-content%2Fuploads%2F2021%2F10%2Fomatic\_report\_final\_arm.pdf&cflen=5173370&chunk=true